ԳՈՒՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՑԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

—

ՓԱՓԼՈՒ, 3 ՄԱՅԻՍ 1882 Թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՑՈՒՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

Ի Պետերբուրգ ի մեծ ցնծութեան ընդունուեցաւ լուրը թէ Ն. Մ. Կայսրութեան Գահակալը՝ Ալեքսանդր Գ. ողջ ու առողջ վերադարձաւ Գատչինայէն։ Ամբողջ քաղաքը լուսաւորուած էր։ Ամէն կողմ կը լսուէր ուրախութեան աղաղակներ։ Ամէն տեղ կը տեսնուէին ժողովուրդի խումբեր

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Ընդհանուր ժողովում «Ընդհանուր դիրքորոշման մասին»)

Ընկեր Ստեփանյան Ա.

Ընկերներ, ես կարծում եմ, որ մեր կուսակցության ներկա ընդհանուր ժողովի ամենակարևոր հարցերից մեկը հայկական հարցերի քննությունն է։

Ա. Ա. Ա.

Ա. Ա. Ա.

Ա. Ա. Ա.

ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ մեզ գրում են փետրվարի 3-ից.—Մինչև ցարդ ուխտաւորաց թիւը հազիւ չորս հարիւրի հասաւ. մեծ մասամբ աղքատ են. Եղանակները տեղւոյս համար տարօրինակ են. Յունվար 22-էն մինչև 25 առատութեամբ կը ձիւնէր, նմանը երուսաղէմի համար չատ քիչ կը պատահի. 25-էն մինչև այսօր կ'անձրեւէ. Տեղական ժողովուրդը ջրոյ նեղութենէն ազատեցաւ, որովհետև անձրեւներու նուազութեան պատճառաւ սկըսած էին նեղուիլ. Առատ ձիւնին և անձրեւին վերայ Յոփայ հորը (Պետ այօպ) որ կեդրոնի հեղեղատին մէջ Սելովամի հարաւային կողմն է, յորդեց. բարեգուշակ նշան մի է այս յորդութիւնը, որովհետև ըստ աւանդութեան արաբացի ժողովրդեան, երբ սոյն հորը կը յորդէ, նոյն տարին հացի առատութիւն կը լինի.

* * *

Նոյն տեղից մեզ հաղորդում են.—Յունվար 28-ին ս. քաղաքս ժամանեց իշխան Սիմէօն Աբամէլիքեանց, որդի Լազարեանց Խաչատուր կոմսի եղիսաբէթ դստեր. ռուսաց վանքը իշխանեցաւ, բայց քանիցս այցելեց ս. Յակովբեանց վանքը, տպարանը, ուսումնարանը և ազգային բոլոր նշանաւոր հաստատութիւնք. Մեծ ընդունելութիւնք եղան ազգային վանուց մէջ Լազարեանց ազգօգուտ գերդաստանին վերջին չառաւիղ երիտասարդ իշխանին. Իսահակեան Պարթևի տօնին օրը ս. պատարագին ներկայ գտնուեցաւ և հաղորդուեցաւ. փետրվար 3-ին մեկնեցաւ ի Դամասկոս, խոստացած է ի դարձին կրկին Երուսաղէմ գալ և ս. գաւիկը այտեղ անել.

* * *

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.— Տեղիս հոգ. դպրոցի ուսումնական առարկաների թւում մտցրած է նաև ձայնագրութիւնը, որի ուսուցիչն է պ. Ե.. Զը նայելով, որ այդ պ. բաւական զարգացած է ձայնագրութեան արհեստի մէջ, սակայն ինչպես երևում է թոյլ և անտարբեր է իր պաշտօնում. Նկեղեցում նա ամենևին ուշադրութիւն չէ դարձնում ժամասացութեան ներդաշնակութեան վերայ.

* * *

ՆՈՒԽԻՑ «Մեղու»-ի մէջ երևցած մի քանի լուրերի առթիւ գրում են.—Նուխիի հոգևոր ուսումնարանը ոչ մի ժամանակ այնքան առատ եկամուտ և քաղաքական աչակերտներ ու աչակերտուհիներ չի ունեցել, ինչպես այս տարի. Հասարակութիւնը միմիայն այս տարի է իմացել ուսման նշանակութիւնն ու սերտ սիրով չաղկապուել իր դպրոցի հետ.—Ինչ աչակերտների դուրս դնալ, ինչ բան,—այդպիսի բան չենք տեսել. Դեռ արքունականները չը մանեն մերը, թէ չէ մերներից դուրս չեն գնալ. Դեռ այս էլ թող իմանայ պ. լրատուն, որ արքունական դպրոցից մեր ուսումնարանն են փոխուել քանի մի աչակերտներ, որոնցից երկուին հէնց պ. Փիրզալեանցն է բերել մեզ մօտ, արքունականից հանելով. Եթէ մենք չարունակէինք ընդունել մեր դպրոցը արքունականից մեզ մօտ եկողներին, ապա նրանց թիւն այսօր 20-ից անց կը լինէր. Բայց զրանից մենք ունինք զգաստ թէմական տեսուչ, յաջորդ, և մեծացած ուսուցիչներն էլ փոփկեր երեխաներ չո չեն, որ սրա՝ նրբա աղեցութեան տակ ընկնելով ու իրանց վարկն ու պատիւը վայր ձգելով մոռանան անելու այն, ինչ որ յատուկ էր իրենց վսեմ կոչմանը.—այդ մասին թող մեր ազգասէր լրատուն անհոգ մընայ.

* * *

ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ մեզ գրում են.—Մօտ օրերս քաղաքիս Ալեսթրիոյ հիւպատոս Քօնդ-Կապրթան, որ երկար տարիներէ այնտեղի հայ կաթոլիկ միաբանութեան տպարանում տպվում է և չատով լոյս կը տեսնի մի լաւ գերմաններէնից հայերէն բառարան. գինն է 10-ը ֆրանկ.

* * *

Մեզ պատմում են, որ ֆրանսիացի հայագէտ Ե. Դիւլօրիէի հոգևհանգիստը կատարելուց վերջը «Արձագանք»-ի խմբագրութիւնը անմիջապէս գնաց հեռագրատունը այդ եղելութիւնը հեռագրելու Ֆրանսիա.

* * *

ՆՈՒԽԻՑ մեզ հաղորդում են.—Քաղաքի ղէպուտատների պարտքն է բարելաւիցնել քաղաքը նիւթապէս, բարոյապէս ուսման կողմանէ, բայց մեր իշխանները ընտրեցին հայոց ղէպուտատ այնպիսի մարդուն, որ ոչ միայն զուրկ է գիտութիւնից, այլ և անգրագէտ է, ինչպիսի է մեծ. պ. սընդղի Հայրապետը. այդ արին այն պատճառով որ կարողանան նրանք զրա պարզամտութիւնից օգուտ քաղել.

* * *

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են.—Հայաստանի ռէլէֆ քարտէզը կազմելու համար աչխարհագրագէտ կիպէրտը այնպիսի մեծ դումար է պահանջած, որ հայերից հազիւ թէ ովկիցէ վստահանայ տալ, ուրեմն առայժմ միանգամայն անյուսալի է այդ քարտէզի լոյս տեսնուիլը.

* * *

ԱՂԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են.—Ըը նայելով Ալէքսանդրօպօլի գաւառապետի պաշտօնակատար պարոն Շախախունեանցի արիական աչխատութեանցը քաղաքի անմաքրութեան վերաբերութեամբ, բայց դարձեալ քաղաքի առաջնակարգ փողոցները, եկեղեցիների մօտ լցուած են ապականութեամբ. Քաղաքի բնակիչներից չատերը տներից և սրահներից դուրս են թափում փողոց աղբ կամ ձիւնախառն կամ մոխրախառն, որպէսզի նկատելի չը լինի և այդպիսով անհետանայ. այս ամենի յանցանքը մասամբ ոստիկանութեան ծառայողների անհոգութիւնից է, որոնք չեն ուզում իր ժամանակին իմաց տալ վարչութեանը, Եթէ որ այժմեանից չը ձեռնարկեն քաղաքի մաքրութեանը, գարունը բացուելուն պէս, կարող է այդ գարչահոտութիւնից վնասակար և տարափոխիկ հիւանդութիւններ առաջանալ. ապա ուրեմն խնդրում ենք ում հարկն է ուշադրութիւն դարձնել այս իրողութեան վերայ.

* * *

Պ. Ց. Նազարեանցը խնդրում է մեզ հրատարակել հետևեալը.—Որովհետև չատերը կարծում են, որ Հալաբարից «Մեղուին» ուղարկվող լուրերը առհասարակ ես եմ հաղորդում, ուստի հարկաւոր եմ համարում յայտնել, որ այդ կարծիքը սխալ է. Հալաբարը արդէն այնքան գրողներ է արտադրել իր միջից, որ ինձանում այլ ևս կարօտութիւն չէ զգում. Այժմ լուրեր հաղորդելով չատ անձինք են զբաղվում՝ ուսուցիչներ, քահանաներ, օրիորդներ . . . Ընդհանուր չարժողութիւն է նկատվում.

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՓԻԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Տիգրան Նազարեանցը խընդրում է նրանց, որոնք յանձն են առնել ձախելու իր հրատարակութիւնները, բարեհաճին մինչև մարտի վերջերը տեղեկութիւն տալու, եթէ հաշիւ չեն կարող հասցնել, որպէսզի ստացած տեղեկութիւններին համեմատ կարողանայ հրատարակելու գրքերի թիւը սահմանել: 1—3

«ԳՈՐԾ» ամսագրին թիֆլիզում կարելի է ստորագրուիլ պ. Շահվերդեանի պավիլիօնում, Զաքարիա Դրիգորեանցի գրախանութում և Տիգրան Նազարեանի մօտ. վերջինիս կարելի է յանձնել և նիւթեր ամսագրում տպուելիք:

ԱՐԴԵՆ ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

«ՉԷՍՏԻՐՕՆԻ ԺԱՌԱՆԳԸ»

անունով վէպի հայ թարգմանութիւնը գեղեցիկ տպագրութեամբ և չորս վիմատիպ պատկերով: Գինն է 1 ռուբլի:

Ծախվում է կենդրօնական գրավաճառոցում և թարգմանողի մօտ Ներսիսեան դպրոցում:

Գիւտ քահանայ Աղանեանց.

«ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»

Այս Փիրմայով բանալով երևանում գրավաճառանոց, կցելով նորա հետ և՝ ուսումնարանապատական, գիւանական, նկարչական և կազմարարական իրերդենների խանութ, յանձն եմ առնում տալ միշտ յիշեալ տպրանքներից երևանի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի դիւանատներին և ուսումնարաններին՝ շատ ձեռնտու պայմաններով:

Ընդունում եմ տպագրել տալու բլանկներ, ծանուցագրեր, ցանցարարութիւններ, աւցեստոմսեր՝ բրօշիւրներ եի գրքեր, ամենամատչելի վարձով:

Ինձ մօտ է գտանվում իմ հրատարակած «ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ» գրքոյկի պահեստը:

Իմ հասցէն՝ Въ Эривань, Нерсесу Симеонянцъ, магазинъ „Другъ дѣтей“.

ՆՈՒԽԻՈՒՄ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ETABLISSEMENT SERICICOLE DE NOUKA

Շերամի սերմեր

Ֆրանսիայից և Իտալիայից սերուած ԴԵՂԻՆ ԲՈՒԺՈՒԺՆԵՐ ՊԱՍՏԵՕՐԻ սիստեմի համեմատ արդիւնաբերում է

ՕԳԻՒՍՏ ԼԷՐԻՍԷ

Ծախվում է մխալը—50 կ., փունդը—48 ռուբլի: թիֆլիզում պ. Ալբերտի խանութում, տուն կօնստանտին Զուբալովի, Գօլովինի-պրօսպէկտի վերայ: Նուխիում Լէրիսէի տան և հիմնարկութեան մէջ: 3—10

ԱՐԴԵՆ ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող Վ. ՈՒՂԵՏԻՆԻ «ДВѢ ЕЛКИ» ՄԱՆԿԱԿԱՆ գրքուկի հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ» անունով:

Այս գրքոյկը ընդունել էր տպագրելու «Հայերէն դրքերի հրատարակութեան ընկերութիւնը», բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու:

Տպագրուած է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով:

Կարելի է ստանալ թէ՛ կենդրոնական գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետևեալ հասցէով, Тифлисъ.—на Авлабаръ. Ивану Петровичу Назарянцъ.

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐԱԾ

ՀԱՄԱՌՕՏ ԳՈՐԾԱԿԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առ այժմ ծախվում է Ներսիսեան ուսումնարանի գրադարանապետի մօտ նոյն ուսումնարանում:

Պատրաստ է տպագրութեան համար և ընդհանուր ՄԵԹՈԴԻԿԱ և առաջին ու երկրորդ տարուայ ՆԻԻԹԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ:

Ներկայ 1882 թուականին Շուշի քաղաքում կը հրատարակվի հայերէն լեզուով գրական-քաղաքական և ազգային ամսագիր



«ԳՈՐԾԻ» իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) և դուրս կը գայ իւրաքանչիւր ամսի վերջում:

Նախագիծ.

ա) ժամանակագրութիւն. տէրութեան կարգադրութիւններ, Ռուսաց և արտասահմանի և Կովկասի կեանքի նորութիւնները:

բ) Քննական յօդուածներ հայերի և նոցա դրացի ազգերի [անտեսական, բարոյական և մտաւորական դրութեան մասին:

գ) Վէպեր, ժանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ—ինքնուրոյն և թարգմանական:

դ) Մատենախօսութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տպագրվող գրքերի, նոյնպէս այն օտար գրքերի, որոնց նիւթը հայոց ու Կովկասեան կեանքից է առնուած:

ե) Քաղաքական տեսութիւն:

զ) Ներքին տեսութիւն:

է) Մանկավարժական ժամանակագրութիւն:

ը) Այլք և այլք:

թ) Իրրև յաւելուած եւրօպական և ռուսաց ընտիր հեղինակների գրուածների թարգմանութիւն:

Յայտարարութիւններ:

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն է ամեն տեղ . 8 ռուբլի
վեց ամսուանը . . . . . 5 ռուբլի
երեք ամսուանը . . . . . 3 ռուբլի

Վաճառքն կանխիկ է.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Шуша. Симеону Ахумянъ, учителю армянской семинаріи.

Խմբագիր-հրատարակիչ Սիմէօն Հախումեանց:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 2-го Марта 1882 г.

Ի Տպարան Մ. Ռոշինեանցի և ընկ.